Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-978[1]-23.09.2010,25.10.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ընկերությունը կարող է ունենալ կլոր կնիք: Կնիքը պետք է պարունակի իր ֆիրմային անվանումը հայերեն լեզվով, ինչպես նաեւ օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) կողմից սահմանված այլ վավերապայմաններ: Ընկերության կնիքը կարող է պարունակել նաև ընկերության անվանումը կամ ֆիրմային անվանումն օտար լեզուներով, ինչպես նաև նրա ապրանքային նշանի պատկերը կամ խորհրդանիշը:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածների՝

1) 1-ին կետերից հանել «և իր կանոնադրության» բառերը, «իրավասու մարմնի» բառերից հետո լրացնել «՝ մասնակիցների ընդհանուր ժողովի» բառերը.

2) 1-ին կետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի սույն կետում նշված լիազորությունը ընկերության կանոնադրությամբ կարող է փոխանցվել ընկերության խորհրդի որոշմանը:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ընկերության ստեղծումն իրականացվում է հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ:».

2) 3-րդ կետի 2-րդ նախադասությունից հանել «(մասնակից)» բառը.

3) Նույն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով.

«6. Ընկերության ստեղծման (հիմնադրման) մասին հիմնադրի (հիմնադիրների) որոշումը կամ ընկերության հիմնադիր ժողովի արձանագրությունը պետք է բովանդակի դրույթներ ընկերության հիմնադրման, մասնակիցների կազմի, մասնակիցների բաժնեմասերի չափերի, ընկերության կանոնադրության հաստատման, ընկերության գործադիր մարմնի ձևավորման մասին, դրույթ այն մասին, որ բոլոր որոշումներն ընդունվել են միաձայն: Ընկերության ստեղծման (հիմնադրման) մասին հիմնադրի (հիմնադիրների) որոշումը կամ ընկերության հիմնադիր ժողովի արձանագրությունը ստորագրում են ընկերության բոլոր հիմնադիրները:»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5 . Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) 1-ին կետում «հիմնադիրների» բառից հետո լրացնել «(մասնակիցների)» բառը.

2) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը հիմնադիրները (մասնակիցները) պետք է ընդունեն միաձայն: Ընկերության կանոնադրությունը պետք է պարունակի՝

ա. ընկերության անվանումը.

բ. ընկերության գտնվելու վայրը.

գ. ընկերության կանոնադրական կապիտալի չափը, մասնակիցների բաժնեմասերի չափերը.

դ. տեղեկություններ ընկերության մասնակիցների մասին, որը ներառում է՝ ֆիզիկական անձանց համար՝ քաղաքացիությունը, անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը կամ հաշվառման հասցեն, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), իրավաբանական անձանց համար՝ պետությունը, որտեղ հիմնադրվել է, լրիվ անվանումը (ֆիրմային անվանումը), պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը, համայնքի համար՝ համայնքի լրիվ անվանումը, պետության համար՝ պետության լրիվ անվանումը, լիազորված մարմնի լրիվ անվանումը:

Ընկերության կանոնադրությունը կարող է պարունակել օրենքին չհակասող այլ դրույթներ, այդ թվում՝

ա. ընկերության կառավարման մարմինների կազմն ու լիազորությունները, այդ թվում՝ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (այսուհետ՝ ընդհանուր ժողով) բացառիկ լիազորությունը հանդիսացող հարցերը.

բ. ընկերության կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման կարգը՝ այդ թվում՝ այն հարցերը, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ.

գ. ընկերության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները.

դ. ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու կարգը.

ե. ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասն այլ անձին փոխանցելու կարգը:».

3) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև սույն կետում սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման:».

2) Նույն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ կետով.

«7. Անձը համարվում է ընկերության մասնակից, իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա, որպես այդպիսին, գրանցվելու պահից:

Ընկերության մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ բանկ հանդիսացող ընկերությունների մասնակիցներինը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:»:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) «բ» կետում «ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ» բառերը փոխարինել «ստանալ տեղեկություններ» բառերով.

2) «դ» կետից հանել «և ընկերության կանոնադրությամբ» բառերը.

3) «զ» կետից հանել «օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով» բառերը.

4) վերջին պարբերությունում «օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ» բառերը փոխարինել «օրենքով, ընկերության կանոնադրությամբ կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ» բառերով:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածի «ա» կետում «կանոնադրությամբ» բառը փոխարինել «հիմնադրման մասին պայմանագրով կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ» բառերով:

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 3-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից (բացառությամբ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի) գնորդին առաջարկված գնով: Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը), պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել ընկերությանը՝ նշելով գինն ու վաճառքի մյուս պայմանները: Ընկերությունն այդ մասին գրությամբ՝ պատվիրված նամակով կամ անձամբ հանձնելով, հայտնում է ընկերության մյուս մասնակիցներին:»:

2) 3-րդ կետի 2-րդ պարբերությունում «կամ ընկերության կանոնադրությամբ կամ նրա մասնակիցների համաձայնությամբ» բառերը փոխարինել «կամ նրա մասնակիցների միաձայն համաձայնությամբ» բառերով:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ և 8-րդ կետերով.

«7. Եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ, վաճառքից բացի այլ ձևով (փոխանակություն, նվիրատվություն և այլն) բաժնեմասը (դրա մասը) կարող է օտարվել միայն ընկերության մյուս մասնակիցների համաձայնության դեպքում:

8. Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել ընկերության մասնակիցներին ծանուցման այլ ձև, նախապատվության իրավունքի իրականացման այլ ժամկետ»:

Հոդված 10. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ամբողջ բաժնեմասը ձեռք բերողին պայմանագրով կամ ընկերության ներքին փաստաթղթերով սահմանված կարգով կարող են փոխանցվել ընկերության մասնակցի՝ մինչև բաժնեմասի օտարումը ծագած միայն ընկերության հետ կապված իրավունքները և պարտականությունները:»:

Հոդված 11. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 16. Ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասի փոխանցումը նրա ժառանգներին կամ իրավահաջորդներին

1. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին միայն ընկերության մնացած մասնակիցների համաձայնությամբ: Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ նման անցումը թույլատրվում է առանց մնացած մասնակիցների համաձայնության: Սույն օրենքով նախատեսված կարգով ու պայմաններով՝ բաժնեմասն անցնելու համար ընկերության մասնակիցների կողմից համաձայնություն չտալը հանգեցնում է մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին) սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով դա վճարելու կամ դրա արժեքը հատուցելու՝ ընկերության պարտականությանը:

2. Ընկերության մասնակցի բաժնեմասը նրա ժառանգներին կամ իրավաբանական անձանց իրավահաջորդներին անցնելու համար ընկերության մասնակիցների համաձայնությունը համարվում է ստացված, եթե ընկերության մասնակիցներին դիմելուց հետո երեսուն օրվա ընթացքում, կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ ժամկետներում ստացվել է մասնակիցների գրավոր համաձայնությունը, կամ ոչ մի մասնակցից չի ստացվել գրավոր մերժում:»:

Հոդված 12. Օրենքի 29-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետից հանել «(աուդիտորի)» բառը.

2) 3-րդ կետի 2-րդ և 5-րդ նախադասություններում «Ընկերության հիմնադրման մասին պայմանագրով» բառերից հետո լրացնել «կամ ընկերության կանոնադրությամբ» բառերը:

Հոդված 13. Օրենքի 30-րդ հոդվածի վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ նախադասություն.

«Նշված հարաբերակցությունը չի կարող մեկից և ընկերության զուտ ակտիվների ու կանոնադրական կապիտալի հարաբերությունից մեծ լինել»:

Հոդված 15. Օրենքի 34-րդ հոդվածի՝

1) 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե ընկերության նշված ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, ընկերությունը ենթակա է լուծարման:»:

2) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն կետում նշված ժամկետի ավարտից հետո ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման կամ լուծարման դեպքերի»:

Հոդված 16. Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Քսանից ավելի մասնակից ունեցող ընկերություններում վերստուգիչ հանձնաժողովի ստեղծումը պարտադիր է: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել նաև ընկերության մասնակից չհանդիսացող անձ: Քսան և քսանից պակաս մասնակից ունեցող ընկերություններում կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ ընկերության վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում (վերստուգող չի ընտրվում)»:

Հոդված 17. Օրենքի 36-րդ հոդվածի՝

1) 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ կետի «ժբ» ենթակետում «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «և (կամ) ընկերության կանոնադրությամբ» բառերը:

Հոդված 18. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1) 1-ին պարբերությունը շարադրել հետևալ խմբագրությամբ.

«Հերթական ընդհանուր ժողովն անց է կացվում ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել հերթական ընդհանուր ժողովի անցկացման այլ պարբերականություն: Հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է գործադիր մարմնի կողմից:».

2) 2-րդ պարբերությունում «պետք է սահմանվեն» բառերը փոխարինել «կարող են սահմանվել» բառերով:

Հոդված 19 . Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից ամենաուշը քսան օր (եթե ընկերության կանոնադրությամբ այլ ժամկետ սահմանված չէ) առաջ այդ մասին ծանուցել ընկերության մասնակիցներին՝ պատվիրված նամակն ուղարկելով ընկերության մասնակիցների գրանցամատյանում նշված հասցեով:»:

Հոդված 20 . Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ընդորում, սույն օրենքի 20-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածներով նախատեսված հիմքերով բաժնեմասի (բաժնեմասի մասի) նկատմամբ սեփականության իրավունքից զրկված, ինչպես նաև մահացած մասնակիցների ձայները չեն հաշվարկվում ձայների քանակի հաշվարկման ժամանակ:»:

Հոդված 21. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին նախադասությունում «որոշումներն ընդունվում են ընկերության միակ մասնակցի կողմից միանձնյա և ձևակերպվում են գրավոր կերպով» բառերը փոխարինել «կարող են ընդունվել ընկերության միակ մասնակցի գրավոր որոշմամբ» բառերով:

Հոդված 22. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին նախադասությունից հանել «`ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետով» բառերը:

Հոդված 23. Օրենքի 48-րդ հոդվածի` 1-ին և 3-րդ կետերում «կանոնադրական կապիտալի» բառերը փոխարինել «զուտ ակտիվների արժեքի» բառերով:

Հոդված 24. Օրենքի 49-րդ հոդվածի`

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից` մեկ տարի ժամկետով, եթե ընկերության կանոնադրությամբ այլ, ավելի երկար, ժամկետ սահմանված չէ:

Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը կազմված է 3 անդամներից, եթե ընկերության կանոնադրությամբ անդամների ավելի մեծ քանակ նախատեսված չէ».

2) 4-րդ կետում «կանոնադրությամբ և այլ» բառերը փոխարինել «ներքին» բառով:

Հոդված 25. Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետը «բաժնետիրական ընկերության» բառերից հետո լրացնել «կամ առևտրային կոոպերատիվի» բառերով:

Հոդված 26. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին», ««Իրավաբանական անձանց պետական գրացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	I. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Օրենքի նախագծի 3-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել, թե որ Օրենսգրքի մասին է խոսքը:	Ընդունվել է. «օրենսգքի» բառից առաջ լրացվել է «սույն» բառը.
	2. Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը, համաձայն որի. «Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև սույն կետում սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման»:	Ընդունվել է. Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման:»: Ընդունվել է, համապատասխան փոփոխություն կատարվել է նաև ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ

	Տվյալ առաջարկության ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա համապատասխան լրացում կատարել նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածում, որի 2-րդ մասը սահմանում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կարող է վերակազմավորվել միայն բաժնետիրական ընկերության: Միաժամանակ, նույն առաջարկության 2-րդ նախադասությունում նշված «սույն կետում սահմանված քանակը» դրույթի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ ոչ Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասում, ոչ էլ Նախագծի քննարկվող հոդվածում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թվի մասին խոսք չի գնում: Բացի այդ, առաջարկում ենք նաև քննարկել, թե լուծարման որ ընթացակարգի մասին է խոսք գնում:	օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում: Ընդունվել է, նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման»:
	II. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասինե ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Նախագծի 24-րդ հոդվածի «1-ին կետով նախատեսված 1-ին պարբերությունը ենթակա է վերախմբագրման, իսկ 3-րդ պարբերությունն առաջարկում ենք հանել, քանի որ այդ հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են նույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով: 2. Լրացնել նոր 25-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 25.	Ընդունվել է. Կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «1. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ տարի ժամկետով, եթե ընկերության կանոնադրությամբ այլ, ավելի երկար, ժամկետ սահմանված չէ: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը կազմված է 3 անդամներից, եթե ընկերության կանոնադրությամբ անդամների ավելի մեծ քանակ նախատեսված չէ». Ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 25-րդ

	Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետը «բաժնետիրական ընկերության» բառերից հետո լրացնել «կամ առևտրային կոոպերատիվի» բառերով:	հոդվածով.
	III. ««Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Նախագծի 4-րդ հոդվածի «1-ին մասում առաջարկում ենք դրույթը լրացնել «անհատ ձեռնարկատիրոջ դիմումի համաձայն» բառերով: 2.Նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ կետը խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. 7) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «5.1» և «5.2» կետերով. «5.1. Պետական գրանցումների (հաշվառումների) իրականացման համար սույն օրենքով սահմանված փաստաթղթերը սույն հոդվածի 5.2 կետով նախատեսված կարգն ուժի մեջ մտնելուց հետո կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով: 5.2. Փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացման կարգը և պետական գրանցման (հաշվառման) առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ»:	Ընդունվել է. Ընդունվել է.
	3. Նախագծի 18-րդ հոդվածի «1-ին մասով նախատեսված առաջարկությունը հստակեցման կամ խմբագրման կարիք ունի:	Ընդունվել է. 21-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «գ) կանոնադրություն՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի)

		կողմից.».
	4. Նախագծի 18-րդ հոդվածի «3-րդ մասում «առևտրային իրավաբանական անձինք» բառերն առաջարկում ենք փոխարինել «առևտրային կազմակերպությունները» բառերով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է, «առևտրային իրավաբանական անձինք» բառերը փոխարինվել են «առևտրային կազմակերպությունները» բառերով.
	IV. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Նախագծի տեքստում «գրանցում» և «հաշվառում» (բոլոր հոլովաձևերով) բառերը փոխարինել «պետական գրանցում» և «պետական հաշվառում» բառերով:	Ընդունվել է: Նախագծի տեքստում «գրանցում» և «հաշվառում» (բոլոր հոլովաձևերով) բառերը փոխարինվել են «պետական գրանցում» և «պետական հաշվառում» բառերով:
	2. Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 170.2-րդ և 170.5-րդ հոդվածների վերնագրերում:	Ընդունվել է: Օրենսգրքի 170.2-րդ և 170.5-րդ հոդվածների վերնագրերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 170.2. Իրավաբանական անձի պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման կամ լիցենզավորման մասին տվյալները հարկային տեսչության մարմիններ սահմանված ժամկետում չհայտնելը», «Հոդված 170.5. Պետական լիազորված մարմինների պաշտոնատար անձանց կողմից անհատ ձեռնարկատերերին սահմանված ժամկետներում չհաշվառելը կամ իրավաբանական անձանց սահմանված ժամկետներում չգրանցելը (չվերագրանցելը) կամ գրանցումը (վերագրանցումը) անհիմն մերժելը»

	V. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Նախագծի տեքստում «գրանցում» և «հաշվառում» (բոլոր հոլովաձևերով) բառերը փոխարինել «պետական գրանցում» և «պետական հաշվառում» բառերով:	Ընդունվել է: Նախագծի տեքստում «գրանցում» և «հաշվառում» (բոլոր հոլովաձևերով) բառերը փոխարինվել են «պետական գրանցում» և «պետական հաշվառում» բառերով:
	2. Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 280-րդ հոդվածում:	Ընդունվել է. Նախագծում լրացվել է նոր 4-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀՈԴՎԱԾ 4. Օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասում «գրանցման» բառը փոխարինել «պետական գրանցման, հաշվառման» բառերով: »
	3. Անհրաժեշտ է վերախմբագրել Նախագծի 3-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 212-րդ հոդվածից հանելով «՝ապրանքներ իրացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպություններում կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված անձանց կողմից առևտրի (ծառայությունների) ոլորտում» բառերը: Առաջարկը պայմնավորված է նրանով, որ բնակչությանը ծառայություններ մատուցողների շրջանակը ավելի լայն է և տրամաբանական է չնշել խմբերը:	Ընդունվել է նախագծի 3-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. . «Օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասում «կազմակերպություններում կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված անձանց» բառը փոխարինել «կազմակերպություններում կամ անհատ ձեռնարկատերի» բառերով»: